այս տէֆտէրտարն՝ ոչ ցուցեալ փաշային զայն, այլ յինքն պահեալ և կոչեաց զվարդապետն, կարդաց առաջի մեզ. և սա ասաց թէ Զեմ կարող այդմ, զի անցեալ ամին այնքան աղմուկն վասն դորա եղ յազգէս մերմէ մինչև սպանին զնստեալն և բազում տուգանս ետուն. օժանդակութեամբ քով տարայց տաց զպարաթն իմ ի տէր։ Եւ անցաք զնորայն զձմ զուռուչն։

Եւ պատրաստեցաք ի ճանապարհ յաւուր տօնի Կիւրղի հայրապետի երկրորդում շաբաթու աւագ պահոցն որ Մարտի ամսոյ ԺԷ, նստեալ ի կառս որ ասի սիրիմի, և հասաք Գ ժամաւ քանակաւ ի տեղին յայն ծովակ և կղզեակ մանուշնք որ ասի Զէքմէճէ (Փոքր), և անդ հանգեալ ի մէջ պանդոկի։

Կիրակի առաւօտու (18 Մարտ) մինչչև ծագեալ արփոյն երթայաք ի ճանապարհ մեք միայն և ոչ այլ ոք զհետ՝ մինչև յօթևանս մեր, բայց երթևեկք չէին պակաս, որ յերեք ժամու աւուրն հասաք ի Մեծ Զէքմէճէ որ էր ըստ քատակութեան Փոքրուն, և ոչ իջեալ ի կառաց, այլ հանգուցեալ զձիս սակաւ պահօք և ելաք ի ճանապարհ Զ ժամաւ, հանգաք Կիրակի երեկոյիս ի Սիլիվրի հին քաղաք Յունաց յափն ծովու։

Բշի (19 Մարտ). ի ժամանակ աղօթից ելեալ անտի՝ ի հասարակել աւուրն մտաք ի Զօռլու Ը ժամաւ և հանգեաք ի տուն Հայոց ոմանց անդր եղելոց։

Եւ Գշի (20 Մարտ) մերձ ի լոյս մտաք ի կառ, մինչ ի տասներորդ ժամ հասաք ի Պուրղազ՝ ի չէնս արքային Սուլէյմանին, որ զարդարեալ զնա մեծամեծ պանտոկօք եւ բոլորապատ նոյնպէս ամուր քարեայ խանութովք և զդարպասն դէմ առ դէմ խաներացն, նոյնպէս և զճամին Սէլաթին ընդ գնայուն ջրոցն։

Դշի (21 Մարտ) ելեալ անտի՝ Դ ժամաւ արգիլեցաք զկառս մեր ի Պապա կոչեցեալ գիւղն, և անտի